«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Հետազոտող ուսուցիչ՝ Պողոսյան Ոսկեհատ

Ուսումնական հաստատություն՝ Արագածոտնի մարզի Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ 5

1.1 Ինքնուրույնության ընդհանուր բնութագիրն ու նշանակությունը ուսուցման գործընթացում 5

ԳԼՈՒԽ 2. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ 9

2.1 Ակտիվ ուսուցման ընդհանուր բնութագիրը, դերն ու նշանակությունը 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Դպրոցն ու կրթության կազմակերպումը յուրաքանչյուր հասարակության ձևավորման, կատարելագործման և զարգացման հիմնական ուղիներից մեկն է: Անհատի ձևավորման հիմքը դրվում է դպրոցում, իսկ հետագա կյանքի ընթացքում ամեն բան տեղի է ունենում հենց այդ հիմքի վրա: Ուստի չափազանց կարևոր է այնպիսի միջոցների մշակումը, որոնց արդյունքում դպրոցից դուրս եկող անհատը կլինի հասարակական խնդիրներ լուծող, առերեսվող մարտահրավերներին դիմակայել կարողացող անձ:

Գնահատելով մեր դպրոցի և ուսումնական գործընթացի արդյունավետությունն ու կարևորությունը, միևնույն ժամանակ չպետք է խուսափենք այն խնդիրների վերհանումից, որոնք առկա են կրթական ոլորտում, քանի որ դրանց ճիշտ և գրագետ լուծումներից է կախված հասարակության առջև ծառացած մի շարք խնդիրների լուծումը:

Այս առումով մեզ համար նկատելի է, որ մեր հասարակության շրջանում քիչ են ինքնուրույն և անկախ անհատները, ովքեր կարողանում են ինքնուրույն ստանձնել պատասխանատվություն սեփական կյանքի և գործողությունների համար:

Հենց վերոնշյալ խնդիրը, մեր դիտարկմամբ, գալիս է նաև դպրոցից, քանի որ դպրոցում հատկապես նախկին տարիների ընթացքում գերակշռում էր այն մոտեցումը, որ դասի ողջ կառավարումը ուսուցչի վրա է դրված, իսկ աշակերտներն օժտված էին պասիվ դերակատարմամբ: Սակայն հասկանալով նման մոտեցման անարդյունավետությունը՝ ժամանակի ընթացքում մշակվել են ակտիվ ուսուցման մի շարք մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել աշակերտների առավելագույն ներգրավվածություն դասընթացի կազմակերպմանը: Այդպիսի միջոցներից մեկն էլ ինքնուրույն աշխատանքների կազմակերպման հնարավորությունն է, որի շրջանակներում աշակերտները կարող են կատարել ինքնուրույն աշխատանքներ, այնուհետև ստուգել դրանք:

Վերոգրյալ հարցադրումների ուսումնասիրումն ու դիտարկումը իրենից մեծ կարևորություն է ներկայացնում արդի ժամանակաշրջանում, քանի որ ներկայումս մեծ դերակատարում է տրվում ակտիվ ուսուցմանը և կատարելագործմանը: Բացի այդ, ինքնուրույնության ձևավորման և զարգացման հարցերի ուսումնասիրումը շատ կարևոր է ոչ միայն կրթության, այլև ողջ պետության և հասարակության համար, քանի որ սովորողների ինքնորույնության խթանումը հանգեցնում է ինքնուրույն անհատների ձևավորմանը, իսկ ինքնուրույն անհատը բարիք է յուրաքանչյուր հասարակության համար:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Սույն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում բացահայտելու այն միջոցները, որոնց գործադրմամբ հնարավոր է սովորողների մեջ ձևավորել ինքնուրույն աշխատանքների կատարման հմտություններ:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար մեր առջև դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ Բացահայտել անհատի մեջ ինքնուրույնության ձևավորման հիմնական մեթոդները,
- ✓ Ներկայացնել ակտիվ ուսուցման հիմնական բնութագիրն ու առավելությունները,
- ✓ Ուսումնասիրել սովորողների կողմից ինքնուրույն աշխատանքների կատարման հիմնական ձևաչափերը:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

1.1 Ինքնուրույնության ընդհանուր բնութագիրն ու նշանակությունը ուսուցման գործընթացում

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Գաղտնիք չէ, որ արդի ժամանակաշրջանում տարրական և միջին դասարաններում ուսումնասիրության միջև գոյություն ունի անջրպետ: Այս երևույթի պատճառները բավականին շատ են, սակայն դրանցից մեկն էլ կարելի է համարել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների՝ կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման վրա ոչ բավարար ուշադրության պակասը:

Նույնիսկ բազմաթիվ փորձառու ուսուցիչներ կազմակերպելով սովորողների ուսումնական գործունությունը՝ չեն խթանում նրանց ակտիվության զարգացմանը: Այդպիսի ուսուցիչներից աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում: Այդպես աշակերտն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման

գործում: Աշակերտներին տրվում է պատրաստի արդյունքը, չնայած որ նա կարող է ինքնուրույն որոնել այն: Երբեմն էլ ուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել հարցի պատասխանը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով, ինչը չի բարձրացնում աշակերտի հետաքրքրությունը՝ առաջադրանքի կատարման համար տարբեր ուղիների որոնման գործում:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:
- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների

բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները[1]:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը դպրոցականների ուսուցման գործընթացում Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական

[1] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.

աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. ամփոփիչ փուլ. Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

7. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ

յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին[2]:

ԳԼՈՒԽ 2. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2.1 Ակտիվ ուսուցման ընդհանուր բնութագիրը, դերն ու նշանակությունը

XXI-րդ դարում մտածողության գլոբալիզացիայի, հասարակության ժողովրդավարացման, բաց շուկայական տնտեսության, հասարակության բազմակողմանի ինֆորմատիզացիայի պայմաններում մեծանում են պահանջները կրթության նկատմամբ, որը պետք է պատրաստի պահանջված մրցակցության

[2]Հակոբյան Լ., Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը, https://znanio.ru/media/-----2615119

ընդունակ մասնագետներ: Այդ պատճառով կրթության ոլորտը ենթարկվում է փոփոխությունների: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Այժմ ուսումնական հաստատությունում ուսուցման ռազմավարությունը փոխարինվում է զարգացման ռազմավարությամբ: Այսօր պետք է ձգտել ուսուցիչակենտրոն ուսուցումից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցմանը: Ամբողջ կյանքի ընթացքում ինքնազարգացման ռազմավարությունը հնարավոր կլինի եթե դեռ աշակերտական տարիներին ապագա մասնագետը տիրապետի ուսումնա-հետազոտական գործունեությանը: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից: Հետազոտությունները ցույց են տվել, որ երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10% , երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%, երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%, երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%, երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը: Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը: Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման էությունը ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ. Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: Ուսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է:

Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք,

հիշողություն, երևակայություն) օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն: Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Ուսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:

3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:

5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, դասախոսի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում թույլ չտա: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական

տեղեկատու, միայն կարգավորում, կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն[3]:

Վերոգրյալ մոտեցումները հնարավորություն են տալիս նշելու, որ ինտերակտիվ մեթոդների կիրառումը մեծապես նպաստում է սովորողների ինքնուրույնության ձևավորմանը, ինչը, մեր դիտարկմամբ խթանում է ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական նշանակությունը հասկանալու համար կարևոր ենք համարում ներկայացնել նաև այն սկզբունքները, որոնք գործում են ինտերակտիվ մեթոդի կիրառման շրջանակներում:

Մասնավորապես, ինտերակտիվ դասընթացին բնորոշ են հետևյալ սկզբունքներն ու արդյունքները.

•Բոլոր մասնակիցները հավասար են

•Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ

•Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը

•Ոչ մի աշակերտ չի քննադատվում

•Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար:

•Ուսուցիչը պարբերաբար ակտիվացնում է աշակերտների համագործակցությունը, հանում մասնակիցների միջև առաջացած լարվածությունը:

•Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է

•Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, տեսահոլովակներ

[3] Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, Երևան, 2019, հղումը՝ https://armedin.am/wp-content/uploads/2019/09/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80.pdf

• Հաղորդակցությունը իրականացվում է ուսուցչի կողմից ձևակերպված կանոնների համապատասխան:

Ինտերակտիվ մեթոդների կիրառման դրական արդյունքներն են՝

•Ինտերկտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար:

•Ինտերկտիվ ուսուցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը քննարկվող խնդիրների լուծման մեջ, ինչը մեծացնում է հետաքրքրությունը, հուզական խթան է հանդիսանում հետագա որոնման գործունեությանը, խրախուսում է նրանց կոնկրետ գործողությունների:

•Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը:

•Զարգացնում է մյուսների տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը:

•Աշակերտների դիրքորոշման մշտական արտահայտությունը վերացնում է սխալի վախը՝ քանի որ նույնիսկ սխալ արտահայտությունը չի պատժվում բացասական գնահատականով:

• Համատեղ գործնեությունը նպաստում է ուսուցչի հետ վստահելի փոխհարաբերությունների առաջացմանը:

•Կիրառելով ինտերակտիվ մեթոդներ և տեխնոլոգիաներ ուսուցիչները հնարավորություն ունեն զարգացնել աշակերտների ստեղծագործական, կրեատիվ մտածելակերպը: Դա ընդունակություն է գտնել նոր, օրիգինալ, ստանդարտ մտածելակերպից դուրս մտքեր, առաջացած խնդիրների լուծում ոչ ավանդական եղանակներով[4]:

[4] Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, Երևան, 2019, հղումը՝ https://armedin.am/wp-content/uploads/2019/09/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80.pdf

Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք նշել, որ վերոթվարկյալ մոտեցումներն իրենց կիրառությունը կարող են ստանալ ռուսաց լեզվի դասավանդման շրջանակներում՝ նպաստելով սովորողների ինքնուրույնության ձևավորմանը:

Մասնավորապես՝ ռուսաց լեզվի դասընթացի շրջանակներում ուսուցիչը կարող է աշակերտներին հանձնարարել բառարանների կամ համացանցի օգնությամբ յուրաքանչյուր դասի համար պատրաստել անծանող բառեր՝ նշելով դրանց հայերեն տարբերակները:

Աշակերտներին կարելի է հանձնարարել նաև իրականացնել ռուսերեն գրքերի ընթերցանություն և յուրաքանչյուր դասաժամի աշակերտներից մեկը կպատմի իր կարդացած գրքի մասին և աշակերտները կուղղեն հարցեր գրքի վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքի շրջանակներում ներկայացված տեսակետներն ու մոտեցումները՝ կարող ենք ներկայացնել հետևյալ եզրակացությունները.

- Սովորողների մեջ ինքնուրույնության ձևավորումը կարող է նպաստել ոչ միայն կրթության կազմակերպման արդյունավետությանը, այլև հասարակության որակական վիճակի բարելավմանը:
- Ինքնուրույնության ձևավորման հարցում մեծ դերակատարում ունի կրթության համապատասխան մեթոդի ընտրությունը, իսկ այդ հարցում պետք է դերակատարումը տալ ակտիվ-ինտերակտիվ մեթոդների կիրառմանը:
- Ինտերակտիվ մեթոդի կիրառումը հնարավորություն է ստեղծում բացահայտելու այն հմտությունները, որոնք ունեն աշակերտները, նպաստում է դասընթացի հետաքրքրության մեծացմանը և աշակերտները սկսում են առավել արդյունավետ դիտանկյունից մոտենալ դասընթացին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- Առաջարկում ենք ռուսաց լեզվի դասի շրջանակներում աշակերտներին հանձնարարել բառարանի կամ համացանցի օգնությամբ դուրս գրել անծանոթ բառեր՝ դրանց հայերեն թարգմանությամբ, այնուհետև դասի ընթացքում դրանք հարցնել աշակերտներին:
- Առաջարկում ենք աշակերտներին հանձնարարել ռուսերեն ընթերցանություն, իսկ դասի ընթացքում յուրաքանչյուր աշակերտ պետք է իր ընթերցած գրքի մասին պատմի աշակերտներին, վերջիններս էլ պետք է ուղղեն հարցեր այդ գրքի վերաբերյալ:
- Առաջարկում ենք ռուսաց լեզվի դասաժամերին կազմակերպել խմբային աշխատանքներ, որի շրջանակներում խմբի անդամներից մեկը հանդես է

գալիս ուսուցչի դերում, իսկ մյուսները՝ աշակերտների, ներկայացվում է դասը, տրվում են հարցեր:

- Առաջարկում ենք ռուսաց լեզվի դասընթացի շրջանակներում աշակերտների խոսակցական հմտությունների զարգացման նկատառումներից ելնելով կազմակերպել փոքրիկ ժամանցային խաղեր, որի շրջանակներում աշակերտներից մեկը մյուսից հարցազրույց է վերցնում տարբեր թեմաներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, Երևան, 2019, հղումը՝ https://armedin.am/wpcontent/uploads/2019/09/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80.pdf
2. Թորոսյան Կ., Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
3. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
4. Հակոբյան Լ., Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը, https://znanio.ru/media/-----2615119